

պէս նախնիք՝ քոյր, բոյն, բայց կար-
դաց քոյր, բոյն. և շխորհրդածեց՝
թէ պէտք էր առելի ևս ուղղել և
կարդալ քոյր, բոյն:

Այսպէս հասաւ առ մեզ սխալ հըն-
չումն, որպէս կը կարծեմք:

Հ. Վարդան Սոմոնեան

ՔՆՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԵՆԴԱՆԵԱՅ ԲԱՐԲԱՌՈՅՆ ՎԵՐԱՅ

Արների կապկաց բարբառոյն
վերայ եղած նոր գննութիւնը առիթ
կու տան մեզ հետամուտ լինել այն
քննութեանց, զորս իւր նախորդքը
բաժնէ են այս կարեւոր գիւտին նկատ-
մամբ: Սոյն բանին փափագողն եղաւ
գիտնականն վենզել (Wenzel) որ մի
գար առաջ հրատարակեց հատոր մի
որոյ խորագիրն է «Նոր գիւտը նը-
կատմամբ կենդանեաց բարբառոյն» հի-
մեալ բանի և փորձի վերայ » Նա
կը պաշտպանէ՝ թէ ստորագրած կեն-
դանիք կարող են իւրեանց զգացու-
մները և շարժումները բացատրել՝ յո-
դական ձայնից միջոցաւ. այնպէս որ
մարդկանց ևս հասկնալի լինի, և այ-
բուբենական նշանաց միջոցաւ գրի
առնուի. և նպատակաւ կոչուած կենդա-
նեաց հնչմանց և ձայնից բառարան մի
յօրինեց՝ մարդկային բարբառոյն բա-
ցատրութեամբ: Թիրաւի ի հաս-
տատութիւն իւր գիւտին, նա կը
պատմէ՝ թէ մի անգամ իւր բարե-
կամին այցելութեան զնաջած լինելով՝
և տնէն բացակայ գտնելով գնա, կը
նստի գառազղի մօտ՝ յորում կը գըտ-
նուէին աղուէք: Յանկարծ նա կը
լսէ կենդանեաց բնականութեան կողմէն
ձայներ՝ որ ըստ իւր բառադրոց ու-
րախոսքեան և զարմանաց նշանակ-
էին. և սակաւ մի ուշ զննէին յետոյ,
հետեցուց թէ նոքա պէտք է որ փախ-
չելու և իւրեանց ազատութիւն ձեռք

բերելու միջոց մի գտած լինին: Երբ
բարեկամը դարձաւ, լսածն անոր հա-
ղորդեց, և ըսաւ որ զգուշութիւն
ընէ: Բայց նա ծիծաղելով պատաս-
խանեց, որ վանդակագուռը լաւ գո-
ցուած է: Եւ երբ ուշ ժամանակ նոքա
ընթերի նստեց էին, և իրենց գոր-
ծոց վերայ կը խօսէին, յանկարծ ծա-
ռայն վազելով կու գայ և կ'իմացնէ ա-
ղուեաներու փախուստը:

Ըստ վենզելի՝ կենդանեաց բար-
բառը շատ պարզ և սահմանաւոր է,
ուժով կամ տկար ձայնից փոփոխու-
թիւնը կրնայ զանազան նշանակու-
թիւններ ունենալ. և հաստատեց որ
կենդանեաց իւրաքանչիւր տեսակը
ունի իւր յատուկ բարբառը կամ գա-
ւառարարբառը. որ չէ այլ ինչ, բայց եւ
թէ իւր ցեղին ընդհանուր լեզուի չա-
փաւորումը կամ համառօտութիւն. այն-
պէս որ վազեցածի (Վրոյն նման կեն-
դանին) լաւ կ'իմանայ իշոյն բարբառը
քան ձիոյն, որովհետեւ սա ազգախառ-
նութեամբ աւելի մերձաւոր է իշոյն
քան ձիոյն, թէպէտ երեք տեսակքն
ևս ձիոց ցեղին կը վերաբերին:

Յուցնելու համար՝ թէ կենդանիք
կարող են իրենց շարժումով հաս-
կընալ մարդկային բարբառը, նոյն հե-
ղինակն կը պատմէ, որ մի եկեղեցա-
կան ունէր շուռ մի՛ զոր կը զրկէր
մերձաւոր սենեկէն փիւք բերելու.
օրինակի համար ըսելով անոր « փի-

ցոյ, սեղանի վերայ կայ չորրորդ, ու-
թերորդ և երկուսասաներորդ թուա-
նշաններով գրքեր՝ բեր ինձ չորրորդը»։
Շուեն իսկոյն կը հնազանդէր հրա-
մանին. այսպէս ունակութեամբ սովու-
րած էր շատ իրաց անուններ։ Դար-
ձեալ երբ բացակայ էր տէրն, և անձ
մի զնա փնտռելու կու գար, շուեն միան-
գամ կը հաջէր. դարձեալ նոյն բանը
կ'ընէր եթէ տէրն ի տան էր, բայց
չէր կամենար անհանգիստ լինել. այ-
ցելուաց գալուստը իմացնելու համար
գուռը կը ճանկէր, և կրկին անգամ
կը հաջէր։ Մի մոնակոցի ընտանիք
ունէր շուեն մի, որ չէր հանդուրժեր
որ տան մէջ աղբ գլխարկով կենան.
շուեն մի օր տան մէջ ամբիկակացի մի
տեսնելով, որ գլխարկը գլուխ՝ կը
կ'ամենար զինքը փորձել, կը սկսի
հաջել. երբ ճարը կը հասնի՝ կը ցատկէ
և իսկոյն գլխարկը յափշտակելով յու-
շիկ կը տանի աթոռի մի վերայ կը
դնէ։ Բաց ի սոցանէ ուրիշ շատ պատ-
մութիւններ կան վնդգլի գրքին մէջ։
Ռադոյ իւր Չայնաբանութիւն գը-
րուածին մէջ (1869) անցողաբար կը
խօսի կենդանեաց բարբառոյն վե-
րայ, և կը մերժէ Մերսեննի կարծի-
քը, որ իւր Ընդհանուր Ներդաշնու-
կութիւն անուամբ գրուածին մէջ կը
հաստատէ որ մարդիկ ձայներ կ'արձա-
կեն անձնիշխան կամօք, իսկ կենդանիք
ընդ հակառակն՝ ըստ պարագայից,
երբեմն ստիպուելով այնպիսի հար-
կէ, որոյ դէմ անկարող են դնել։ Ըստ
Ռադոյի՝ այս կէտս ըստ հոգեբանու-
թեան ստոյգ չէ, և կ'ըսէ՝ որ այս
հարկի վարդապետութիւնն հաւա-
սարապէս կը պատշաճի շատ չղա-
կրասնելու, որք չեն կարող իրենց լե-
զուն սանձել։

Նոյն իսկ Ռադոյ կը պատմէ, որ
Յուլիոս Հոլքարդ միանգամ ծերունի
աստիճանաւորի մի հետ, որ կը հա-
ւաստէր թէ ինքն կապկաց լեզուն լաւ
կը խօսի, կ'երթայ կենդանեաց պար-

տէզը. մօտենալով կապկաց վանդակի
մը, աստիճանաւորը կը սկսի յաջոր-
դաբար կոկորդային ձայներ հանել.
կիրոն, կիրիկեն. կուրիկիկիրիկոն. և
մի վայրկենի մէջ, բոլոր կապկներ
հոն կը հաւաքուին՝ ուղղելով առ նա
զանազան շարժումներ, ծիծաղելով և
պատասխանելով. այս խօսակցութիւնը
գրեթէ տեսց մի քառորդ ի մեծ
գուարճութիւն կապկաց՝ որք մեծաւ
ուրախութեամբ կը պատասխանէին
աստիճանաւորին. ապա երբ աստի-
ճանաւորն թարգման երթալու նշան
տուաւ՝ աստիկ գրգռուեցան և մա-
գըցելով վանդակապատը գանգատա-
նաց ձայներ հանելով, չէին կամենար
հնազանդիլ հրամանին, երբ նա ող-
ջունելով զնոսա հեռացաւ։

Ով որ քններ կամ ուշ դրեր է ճար-
տար և ուշիմ թութակի մը, կարող
չէ չհամոզուիլ, որ կայ նորա մէջ գե-
ղեցիկ յատկութիւն մի մարդկային
լեզուի յօդաւոր բարբառին ձայներով
նմանցնել։ Հումբոլդ կը հաւաստէ,
թէ երբ Որենոկոյի Ստուրեանց ցեղը
վերջացաւ, միակ արարածը որ կա-
րող էր նոցա լեզուն խօսիլ, էր մի
ծեր թութակ որ մեծ և իշխանազուն
ցեղէ մի մնացեր էր։ Այդ յարգի
թուշունը՝ յիրաւի ամենահարկաւոր
օրինակ մ'էր, ոչ միայն Կորնովոյայի
պառաւին, որոյ մահուանէ մի քանի
տարի յետոյ իւր ազգին գաւառաբար-
բառը դադրեցաւ այլ ևս խօսելու բար-
բառ լինելէ, այլ և այն ազգին՝ որոյ ձայ-
ներ այլ ևս չպիտի լսուէր։ Աւելի հուշա-
կաւոր թութակն, որոյ յիշատակ տա-
կաւին կը պահուի, որ ապրեցաւ
1830—1840, էր Ստրասբուրգի Հանիկ
կանոնիկոսին։ Սա անոնաւոր եղա-
նակաւ օրն իրկու անգամ տիրոջն
կ'ընդունէր կրթութեան դասերը, և
շատ յառաջադիմեց։ Մի օր տեսնելով
մարդ մի որ տիրոջ սենեակը կը մըտ-
նէր, բարձր ձայնով գոչեց « Ուստի
կոչ գաս »։ յետոյ ճանչնալով որ մի

պատուաւոր եկեղեցական է, ցած ձայնով ըստ. « Ո՛վ կ'աղայեմ ներեցեք խեղձ քոչուներս » . յաճախ խօսակցութեանց կը մասնակցէր, և յոյժ շատախօս էր, երբեմն առանձին կը խօսէր, օրինակի համար ըսելով՝ կը զարնես ինձ, կ'ուզես զարնել ինձ . այս՝ այս, աշխարհս այսպէս կ'երթայ, նաեւ սովորած էր Փլոտովի Մարդաս կոչուած ամբողջ երգը և գեղեցիկ կ'երգէր :

Սիկայիս ևս ունի մի ուրիշ թուլութակ . յիսուն տարուան է՝ և զարմանալի ուշիմութիւն մ'ունի . ճանապարհէն անցուգարծի ամեն ձայները կը հանէ՝ ևս և շատ կենդանեաց, իւր ծաղրածութեան գլուխ գործոցն է՝ նըմանցնել խոզի այն ձայնին՝ զոր կը հանէ մորթուած ժամուն, նաեւ հաւաւարապէս կարող է կաղկանծել, և սոր է ձայնով խանչել . նմանցնել այն հեծեծանաց՝ զոր կենդանին իւր վերջին շունչ աւանդած ժամանակ կը հանէ՝ նա իւր մօտ եղած խօսակցութեանց ուշ կը դնէ, ըստ պատշաճին զարմանաց ձայներ կը հանէ, կը ծիծաղի մարդկանց հետ ծիծաղաշարժ գէպքերով . և այս վերջին գործողութիւնը . ուրախութեան արդիւնք է : Սովորութիւն ունի ճայէն մաս մի պահել ընթերեաց համար, և սա է միակ նորա ուշիմութեան արտայայտիչը . կ'երգէ երգեր անխալ և յանկարծակի, և այնպիսի ճաշակով և ոճով՝ որ երաժշտանոցի աշակերտաց նախանձը կը չարժէ, իւր երգած կտորները հիմնական և գլխաւոր ձայնից վերայ հաստատուած են . այնպիսի երաժշտական զգացում մի կը ցուցնէ և անոր ծիծաղի ներկաշնակութիւն մի, զոր չորս մարդկային սեռի միայն կարող ենք վերագրել :

Թութակը՝ հակառակ իմացական արարածոց, որոց մանկութիւնը շատ երկար կը տևէ, շուտով կը զարգանան՝ և մարդէն աւելի կ'ապրին . և յաճախ այն ընտանեաց անդամներէն աւելի կ'ապրին՝ որք զիրենք մեռցել են, հաշուելով միանգամայն այն որդիքը՝ որք իրենցմէ յետոյ ծներ են . Եւ իրենց կենդանութեան ժամանակ յառաջագիմութենէ և սորվելէն չեն դադրիր, հետաքրքիր նման կապկաց, և կարող որպէս բազմափորձ կապիկ :

Եթէ Պ . Գարների նպատակն էր, թէ ինչպէս կարելի է կենդանեաց յայտնել մարդկային բարբառոյն գործածութիւնը, և ինչ ազդեցութիւն կարող է ունենալ նոցա իմացականութեան վերայ, նա թերեւ լաւագոյն կ'ընէր թութակներ ընտրելով իւր զննութեանց առարկայ . բայց փոխանակ կենդանեաց բարբառը սորվելու, իւր բարբառը նոցա չսորվեցնելու համար, իմաստութեամբ ընտրած է կապիկներ : Ուստի պէտք է խոստովանիլ որ իւր զննութեանց արդիւնքները թէպէտ աւելի ուշագիւր փորձէ յառաջ եկած են՝ սակայն աւելի դժուար իմանալի են քան վէնզելին . թէպէտ և սա այլ երբեմն շատ կարեւորութիւն կու տայ չնչին բաներու :

Գարների քան իւր նախորդն ունեցած առաւելութիւնն ձայնախօս գործւոյն պէտք է տալ՝ քան իւր գիտական զննութեանց . այս գորաւոր գործւոյն զինուած, կարող է ամենակարեւոր ծառայութիւններ մատուցանել կենդանաբանից . կապկաց լեզուին այբուբենական գրութիւն յօրինելով՝ կը ինի կադմոս մարդակերպից ցեղին :

